



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ուչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material




1000-9



Պրակտիկայի քույր յերկրների, միացե՛ք

Թ. ՋԻԼԱՎՅԱՆ

# ՓՐԿԻՉ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿՈՈՊ

1927 թ.

ՅԵՐԵՎԱՆ





---

Արժանացել է Հայկոսպի գրական մըր-  
ցանակաբաշխության II-րդ մրցանակին

---



334

Փ Ր Կ Ի Զ

Կ Ո Ր Պ Ե Ր Ա Տ Ի Վ


16033 A I 4055



Թ. ԶԻԼԱՎՅԱՆ



ՅԵՐԵՎԱՆ 1926 թ.





ՀԱՅ ՊՈԼԻԳՐԱՅԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Գրառեսպ. 752բ.

Պատ. 4447

Տիրաժ 4000



## « ՓՐԿԻՉ ԿՈՌՊԵՐԱՏԻՎ »

Մ ու ճ ք ե լ բ ի ձ ա ն ն շ ա ն ե լ ե Ր վ ե Ր ջ ի ն ա ղ ջ կ ա ն :

Ն ա հ ն ա ղ ա Ր յ ա ն մ ի մ ա Ր ղ ե Ր , վ ո Ր ի Ր մ ե ջ ա մ փ ու փ ու մ ե Ր ի Ր մ ի ջ ա վ ա յ Ր ի՝ պ ա պ ե Ր ի ց մ ն ա ց ա ծ ս ո վ ո Ր ու թ յ ու Ն ն ե Ր ն ու կ ա Ր զ ե Ր ը :

Ն ա մ ա Ր ղ ու յ ե Ր տ վ ե լ ի Ր չ ո Ր ս ա ղ ջ ի կ ը — կ ա մ ե ն ու մ ե Ր հ ի ն զ ե Ր ո Ր ղ ի ն ե լ ն ու յ ն պ ե ս ա բ ու ռ ո վ տ ե ղ ա վ ո Ր ե լ :

Ա Ր ու ռ ո վ :

Ա յ ս ե Ր ն Ր ա մ ի ա կ մ տ ա հ ո զ ու թ յ ու Ն ը :

— Ա յ մ ա Ր ղ , բ ա ե Ր ե խ ու բ ա ժ ի ն ք ի հ ա մ ա Ր ի ն չ տ ի ա ն ե ն ք , — մ ի շ տ ա ն հ ա ն զ ս տ ա ն ու մ ե Ր Մ ու ճ ք ե լ ի կ ի ն ը :

Մ ու ճ ք ե լ ը մ ե ծ հ ու յ ս ու Ն ե Ր , վ ո Ր ա յ ս տ ա Ր ի լ ա վ բ ե Ր ք կ ու Ն ե ն ա , բ ա յ ց հ ու յ ս ե Ր ը չ ա Ր ղ ա Ր ա ց ա ն . բ ե Ր ք ը ս ա կ ա վ ե Ր . ա ն ս ս ու Ն ն ե Ր ի կ ե Ր ն ե լ չ կ ա Ր ո ղ ա ց ա վ լ Ր ի վ հ ա վ ա ք ե լ :

Վ ո Ր պ ե ս հ ն ա ղ ա Ր յ ա ն գ ա ղ ա ի ար ն ե Ր ի տ ե Ր մ ա Ր ղ , ն ա վ ո չ մ ի ա յ ն կ ո Ր ց Ր ե լ ե Ր ի Ր հ մ ա յ ք ը ն ո Ր հ ա ս ա Ր ա կ ու թ յ ա ն մ ե ջ , վ ո չ մ ի ա յ ն ի Ր չ Ր ջ ա պ ա տ ու մ մ ի տ ե ս ա կ ա վ ե լ ո Ր ղ մ ա Ր ղ ե Ր դ ա Ր ձ ե լ , ա յ լ և տ ն տ ե ս ա պ ե ս՝ գ ն ա լ ո վ , ա վ ե լ ի ա ղ ք ա տ ու թ յ ա ն մ ե ջ ե Ր ը ն կ ն ու մ և դ Ր ա պ ա տ ճ ա ո ն ա յ ն ե Ր , վ ո Ր Մ ու ճ ք ե լ բ ի ձ ա ն թ ե Ր ա հ ա վ ա տ ու թ յ ա մ ք ե Ր վ ե Ր ա Ր ե Ր լ ու մ դ ե պ ի ա յ ն տ ն տ ե ս ա կ ա ն բ ա Ր ե ն ո Ր ո զ ու թ յ ու Ն ն ե Ր ը , վ ո Ր ի Ր հ ե տ գ յ ու ղ ե Ր բ ե Ր ե լ ն ո Ր ի Ր ա վ ա կ ա Ր զ ը :



Նրա համաքայարի մարդիկն էյին դյուլի արդեն չլու-  
տած տերտերը և մի բանի հին կարգի տիպիկ քեթխու-  
ղաներ :

Սիրտները նեղանալիս նրանք հավաքվում էյին այդ  
քեթխուղաներից մեկի տանը ու զրույց էյին սարքում ,  
խորհուրդն ու կոտակերատիվը մասխարա անում , վրտի  
տակ գցում :

-- Այտա , կոտակերատիվս վո՞րն ա , վրա պրծած խո-  
տում եր քեթխուղան :

— Դո՛ւ ասա , տերտեր , մեր լմաստունը դուն ես :

— Ե՛հ , ինչ ասեմ , մի յերկրից վոր ժամ ու պատա-  
րազը վերանա , ել հեչ մի բանի մասին խոսել կլնի՞ :

Այսպես մինչև ուշ գիշեր զոյլասարին (թութուն)  
զոու տալով , զրուցում էյին , սիրտները կտրած , փնո-  
վում նորը , հայհոյում լածիրակ նորերին և առաջի  
վորձկականչին սկսում էյին ցրվել :

— Ե՛հ , ել վորը պատմեմ . մեր ջահելների արածը  
մինը չի , տասը չի . . . . .

Այս խոսքերի հետ Մուքելը վերցնում եր մի անկյու-  
նում դրված ձեռնափայտը ու կամաց դուրս եր գնում ,  
գլուխը հուսահատորեն պտտելով :



Գյուղը քնած է :


Մուքելը գլուխը կախ , իր մտքերին տարված , գնում  
է գյուղի նեղ փողոցների ցեխերը ճմրթելով : Ծների  
յերբեմնակի հաջոցը կարծես սթափեցնում է նրան ու  
նա թեթև կերպով սուլում է . շները կարծես հասկա-  
նում են , վոր անցնողն ոտարական չէ և կտրում են  
ձայները :



— Հեյ, հե՛յ, լալում ե չորանի բնորոշ կանչը հեռավում և նրան հետևում ե սլափասխանը նույնպես .

— Հեյ, հե՛յ :

Մուքելը մտնում ե իր բակը և խորագննին դիտում չորս կողմը . այնուհետև անցնում ե դոմբը , ուր կապված են յերկու կով ու յերեք մողի :



Առաջները կեր ե ածում ու շոյում նարգիզի մեջքը , շոյում , սրտի մեջ մրմուռ պատած , վորովհետև շուտով նրանից պիտի բաժանվեր :

Կար ժամանակ , վոր այս դոմբը լիքն եր անասուններով :

— Ի՞նչ յեղան , ո՞ւր գնացին . . .



Մուքելը գլուխը քաշ, մոլորվածի պես մի քանի անգամ սլտտվում է գոմի մեջ, վորի մի քունջում, ձողի վրա, մի քանի հավ թառ են յեղել՝ վիզները փորը դցած :

Սա ե՛լ կանցնի, բարձր տրտասանում է Մուքելը և դուրս գալիս գոմից :

Յերբ Մուքելը մտնում է ողան, բոլորին պառկած է դտնում :

Ողայի մի կողմում կապված է յերկար ու լայն թաղթ, վորի մի ծայրին պառկած է Ուստիան նանը, այնուհետև Նազլուն, իսկ մյուս ծայրում անխռով կերպով քնած է Վարդանը—Մուքելի միակ տղան :

— Այ մարդ, ես ի՞նչ ուշացար, — տեղում նստելով հարցրեց Ուստիանը :

— Ի՞նչ անեմ, այ կնիկ :

— Ի՞նչ տես անիլ, հրես վորդիան վորիս ա լիսը պեծին կտա :

— Վոր տեղս մտնեմ, կարծում ես քունս կտա՞նի :

Մուքելը շորերը հանում, տեղն է մտնում, բայց իսկույն և յեթ չի քնում. խոսում են իրենց դարդերից, իրենց պակասություններից : Խոսում են թե ինչպես Նազլուին ճամփու կղնեն. խոսում են կամաց :

— Այ մարդ, բա երեխու բա՞ ժինքը :

— Կըլնի :

— Ախր վո՞ր տեղից կըլնի, ասա, աչքս դուրս դա, բա ես նեղությունը մենք տեսած ենք, վոր հիմա յենք քաշում. վայ թե ուզում ես բան ծախե՞ս :

— Երինջը :



— Ա՛խ, Փողը դժսիս, Նարգի՞զը :

— Հա :

— Ո՞ւմ .

— Տերտերին :

— Բա գինը .

— Գինն ել, մեր տերտերն ա, յո՛ւա կերթանք :

— Ախր քանիսո՞ւմ .

— Բերնիցս քառասուն թռավ :

— Ի՞նչ ես ասում, այ մարդ, խոմ հիմա մոզին  
են քառասունով ծախում . յես ուզի չեմ . . . յես Նարգիզը  
տալ չեմ :

— Մեզ թուքը լիզել չկա, մրմռում ե Մուքելը խըս-  
տորեն :

Սենյակը մուժն ե, քչիչոցը շարունակվում ե մինչև  
ուշ գիշեր :

Մուկը մի անկյունում խրթխրթացնում ե :

Նաղլուն չի քնած, այլ վերմակը գլխին քաշած իրեն  
քնած ե ձևացնում . աշխատում ե լսել ծնողների քչիչո-  
ցը, բայց ականջին են հասնում միայն հատ ու կտոր  
բառեր . վոչինչ չի հասկանում . այլ ընդհանուր առմամբ  
ըմբռնում ե, վոր ծնողներն իրեն մասին են խոսում :

Դյուր ե գալիս Նաղլունին այդ քչիչոցը . դյուր ե  
գալիս անչափ ու մտածում ե՝

— Յերբ յես ել կնիկ դառնամ, մենք ել գլուխներս  
վերմակի տակ, շունչ շնչի տված, մինչև ուշ գիշեր կա-  
նենք՝

— Քիչի-փիչի, քիչի-փիչի . . .



Մուքելն իր խոստման համաձայն յերինջը ավելց



տերտերին, իսկ փոխարենը ստացավ չորս չերվոնեց և մի նամակ քաղաքի բազազ Նիկոլի վրա, վորը նամակէ համաձայն Մուքելին մեծ զիջումներ պիտի աներ և ճոթը կոտակերատիվի գներից ավելի եժան պիտ բաց թողներ :

— Ապի, դու դրա համար քաղաք մի գնալ. Նազլուի բաժինքի ճոթը մեր կոտակերատիվում ավելի եժան կանենք. տերտերի նամակը քյալակ է. դու նրան ալանջ մի գնիլ. պնդում եր վարդանն իր հորը :

— Այ բալամ, լաճիրակնուց ճոթ ասնել չի լինի :

Մուքելի կարծիքով նոր կարգերն էլ, նոր հիմնարկներն էլ յերեխու իաղեր են. իսկ կոտակերատիվն էլ բուրովին միջեն չի :



— Ապի, ախր կոտպերատիվը քեզ ի՞նչ վնաս տ  
տվել:

— Դու են ասա, թե ի՞նչ սղուտ տ տվել:

— Ով կոտպերատիվի հետ գործ ունի, նրա սղուտն  
ել անպակաս է:

— Սուտ բանին վոչ հավատամ:

— Ապի, տես չիփլախ Սաքոյին, մեր հարեանն է.  
առաջ իր դուանը մի չորքոտանի չուներ, իսկ հիմա...

— Հիմա նա հինգ կով ունի, գուլթան ունի, քամե-  
լու, հնձեղու ու փոցխեղու մեքենաներ ունի. դեռ ուրիշ  
չատ բան ել կարող է ունենալ: Ե՛հ, մենք ել կարա՞նք  
չիփլախ Սաքո դատնալ. — ասում է հեզնորեն Մուքելը:

— Ինչո՞ւ չենք կարալ...

— Դովրանը նրանն ա:

— Դովրանը մերն էլ ա, համա մենք մեր բախտին  
քացի-քացի յենք անում:

— Ի՞նչ, այ տղա, դու ասում ես զնամ չիփլախին  
թայ ըլե՞մ:

— Ինչի՞ չալիտի թայ ըլեմ. ինչո՞վ ա պակաս: Այ  
եսոր ել կառավարությունից 25 ուրբլի պարգև ստա-  
ցավ:

— Ըհը՛, ըհը՛, եղ եր պակաս. ե՞ղ ինչի համար:

— Նրա համար, վոր նա ամեն բան գյուղատնտեսի  
խոսքով ա կատարում:

Մուքելը տարակուսանքով շարժում է գլուխը և իր  
մեջ շարունակ դարձանում նոր կարգերի բռնած գործի  
վրա: Նրա համար տարորինակ էր, վոր կառավարու-  
թյունը մի շարք մշակումներից բոլորովին հարկ չեր  
առնում, տարորինակ էր, վոր կառավարությունը պար-  
զենք էր տալիս և հարյուր տեսակ արտոնություններ



չնորհում և կամ դանադան շինարարություններ կատարում—դարոց շինում, ճանապարհ դրում, գյուղում բժիշկներ և գյուղատնտեսներ պահում, կոոպերատիվ սարքում :

— Վարդան ջան, լավ իմացիր, վոր ես բոլորն աչքակապություն ա, սրա տակն ուրիշ յեղնյալ միտք կըլի... սրա հոտը հալբաթ մի որ վեր կլի : Այսպես եր Մուքեչն ուղում հանգստացնել՝ թե իրեն և թե Վարդանին :

Մուքեչն արդեն պատրաստ եր քաղաք մեկնելու : Վարդանն առանձին ջանասիրությամբ պանիրն ու յուղը դարսում եր խուրջինի մեջ ու բերանը կապում :

— Այ մարդ, ճամփին չմըսես, առ ես դոչլուղն ել հագիր :

— Նանի, ապնին ասա՝ ինձ համար ականջի ող ել բերի, — փսփսում եր Նազլուն մոր ականջին :

— Այդ մարդ, թե բան ա՝ փողդ չհերքի, ես պանրի ու յեղի փողովը մի երծաթի ականջի ող ել առ երեխու համար... սիրտը չկտրես, — վախվխելով կմկմացնում եր նանը, լավ իմանալով, վոր իր մի ավելորդ խոսքով նրա զայրութը կարող ե շարժել :

— Չորս չերվոնեցը կհերքի բաժինքի անհրաժեշտ իրերը դնելուն և դեռ մի քանի զարդարանք ել կգնեմ, — մտածում եր նա առանձին դոհունակությամբ :

— Ապի, խուրջինը պատրաստ ե, — ասաց Վարդանը և խուրջինն ուսը գցեց՝ հորը մինչև կայարան ուղեկցելու :

Մուքեչը չորս չերվոնեցը դրպանում՝ ճանապարհ ընկավ : Գնում եր նա մտահոգության մեջ ընկած :



Նրան հետևում եր Վարդանը :

— Ապի կոռպերատիվի առաջով չանցնենք :

— Յալդո՞ւղ :

— Դե լավ չի . մեր կոռպերատիվը թողած , գնում ես ուրիշ տեղ :

— Արի գնանք , արի , յես դրանց գլուխ չեմ խոնարհիլ :

Յերկուսով լուռ անցնում են կոռպերատիվի առաջով , վորի մոտ գյուղացիներն ինչ վոր մեքենա չըջապատած՝ դատողություններ եյին անում : Նրանք Մուքելին նկատելով՝ սկսեցին սրախոսություններ անել .

— Աղա Մուքել , դվո՞րը\* ) :

— Քաղքնու վրա , — Մուքելի փոխարեն պատասխանում ե Վարդանը և հայր ու վորդի գոռ են տալիս իրենց վոտքերին , ափսոսալով , վոր ճանապարհը գուր չփոխեցին :



\* ) վոր կողմը :



— Խեր ըլի, Մուքել աղա, խե՛ր, ճայնում եյին  
դյուղացիք արդեն Մուքելի հետեից, առանձնապէս  
չեչտելով «աղա» խոսքը, լավ իմանալով սակայն, վոր  
նա յերբեք աղա չի յեղել, բայց միշտ աղաների ազդե-  
ցութեան տակ ե գտնվել:

— Խեր ե թե շառ ե ձեզ ինչ, — մըմում եր քթի տակ  
Մուքելն ու շտապում առաջ, նրանց հայացքից շուտով  
հեռանալու:

— Բա սա բան ա, բա սա բան ա, — սրտնեղութեամբ  
փնթփնթում եր Մուքելը, ձեռքը մեկնելով դեպի մի  
քանի քանդված գոմեր ու հասարներ, վորոնք մեջ տեղից  
հանվում եյին փողոցները բարեկարգելու նպատակով:

— Վաղուց պետք ե եղ բանն արվեր, բա վոր սե-  
լերը գալիս են ես քունջումը դեմ ըլում ու սոնիքը ջար-  
դում, լավ ա՞: Բա ես ուսումնարանը տես, սթավուր  
չենք հալքաթ մեր գեղն իրա որում տեսած ա:

Փողոցի աջ կողմն ընկնում եր նոր ավարտված  
դյուղի 7-ամյա դպրոցի գեղեցիկ շէնքը, վորը դյուղի  
պարծանքն եր համարվում և նրա հաղթանակներից  
մեկը:

— Հուսումնարան... հուսումնարան, տո մինը  
հարցնող ըլի, եղքան երեխեք վո՞րտեղից տի հավա-  
քեք ես դարիգամբը լցնելու համար:

Մուքելի սիրտը նեղանում եր այդ բոլորից և նա  
ծոծրակից սրտնեղութեամբ առաջ բռնելով հսկայա-  
կան փափախը գցում եր աչքերը:

Նրանք շտապում եյին դեպի ահուկի ձորը, վորտեղ  
գնացքները դիվային ճշոցներ արձակելով, սլանում են  
առաջ, մարդկանց լի աչխարհ հանելու:

Կուռ շտապում են յերկուսով, տրեխները հապին



տրորելով կավային մածուծիկ ցեխը և նրանց վտաքերի  
տակից յուրաքանչյուր քայլափոխին ձայնակցում են .

Ճլրխի-ճլրխի, ճլրխի-ճլրխի :

Կանգնած և գնացքը :

Կայարանի պատին կախած դանդը շոր կերպով ու  
համաչափ խփում և յերկու անգամ :

Գնացքը սուլում և ուժեղ :

Մոտիկ կանգնած դյուզացիները շտապով ծածկում  
են ականջները .

— Ա՛հ, տերդ շմեռնի, խլացրիր :

Ու շողեկառքը կարծես նոր հողի առած, ուժեղ  
կերպով ու իրար հեռեից հեռոցներ և հանում .

— Փու՛հ, փու՛հ, փու՛հ . . .

Գնացքը շարժվում և :

Մուքելը Վարդանին դանազան կարգադրություն-  
ներ և անում, կարծես այդ բոլորը հենց նոր են միտքն  
ընկել :

— Վարդան . . . շարունակում և վազոնի միջանցքում  
կանգնած Մուքելը :

Վարդանը շունչը պահած վազում և, սկզբում վա-  
զոնից հեռ շմնալով, վոր լսի հոր պատվերները :

— Ջեյրան մողուն ձեթ քսի, ձեթ . արաբի դեզն  
ել . . .

Գնացքն ավելի արագանում և, անիվները դժափո-  
խին տակտով լրացնում են գնացքի ընդհանուր աղմու-  
կը և Վարդանն այլևս չի լսում ապնի խոսքերը, վոր  
կարծես ինչ վոր կարևոր հարցի յեն վերաբերում :

Կանգ և առնում շունչը կտրած և գնացքն անցնելուց  
հետո՝ կանգնում և բերանի մեջ տեղում, վտաքերը լայն





բաց արած ու հետևում ե գնացքին , մինչև վոր նա աչքից կծածկվեր առաջին պտտանում :

Մուքելը քաղաք հասավ լուսարացին :

Լավ ժամանակ :

Առանց այս ու այն կոմն ընկնելու , ուղիղ գնաց բազազ Նիկոլի խանութը : Պակասությունը հարկավոր եր շուտ հոգալ :

Մտավ խանութ ու շփոթվեց : Նիկոլը չեր յերևում : Դադդյասի այն կողմը շատ ծառայողներ խանութը լըցված գյուղացիներին ցույց եյին տալիս իրենց ճոթեղենը , չափում ու կտրում : Մի այլ կողմում յերկաթեղենի , այնուհետև սապոնի , շաքարի ու բազմաթիվ ապրանքների առուտուր ե կատարվում :

Շփոթված կանգնել եր խուրջինն ուսին ու մտածում եր :

— Բիձա ջան , ի՞նչ կուղեք , դիմեց նրան մի ծառայող :

— Բան չեմ ուզում , — սառը պատասխանեց Մուքելը և մտքի հետևից ընկավ : Մուքելը գլխի ընկավ , վոր սա կոտպերատիվ ե և բազազ Նիկոլին այստեղից հեռացրած պիտի լինեն :



— Խեղճ Նիկոլ, մտածեց նա և գուրս յեկավ խանութից քոռ ու փոշման :

Փողոցներում մի քիչ պտտելուց հետո, վորջապես մի յերեսա գտավ, վորը նրան տարավ ուղիղ բազայ Նիկոլի խանութը :

— Ա՛, Մ ու չ ե լ բ ի ձ ա , Մ ու չ ե լ բ ի ձ ա , լիսը քո տեսնողաց , ես վո՞ր խաչիցը . . . համեցե՛ք , համեցե՛ք :



Դաղդահի այն կողմից բաղադ Նիկոլը բարձրացնում է մի նստարան ու տալիս Մ ու չ ե լ ի ն : Սա վերցնում է



նստարանը, խուրճիներ դնում և գետին և դլուխը բարձ-  
րացնելով մի հայացք և դցում խանութի դատարկ թա-  
րեքներին ու մի խոր հողոց քաշում :

— Պալիա Նիկոլ :

Մուքելը դլխով ցույց և տալիս դատարկ թարեք-  
ները ու կարեկցութեան ժպիտ և արձակում :

— Ել մի ասիլ, ել մի ասիլ, — հորիզոնական ուղ-  
ղութեամբ, հուսահատորեն շարժում և Նիկոլն իր մեծ  
դլուխը, վորի յերբեմնի տռուղ ու կարմիր մսերը միան-  
գամայն լիկել ու կախ են ընկել :

Յերկար ու բարակ մտքերի փոխանակութեան են  
կատարում ու միմիանց դարդեր հարցնում, շարունակ  
աչքը դռանը պահելով, շլինի թե շեմքից ականջ դնող  
լինի :

Մուքելի խուրճիներ ծակում և բազազի աչքը :

— Վոչինչ, լավ և ձեռքս ընկել, յես սրան թեփոա-  
հան կանեմ, — մտածում եր բազազը դազգահի հետևը  
նստած :

— Փիչխա՛, — հանկարծ խրոխտ կերպով ձայնեց  
Նիկոլը :

Անկյունում նստած մի լղարիկ յերեխա տեղից վեր  
և թռչում ու մոտ վազում :

— Փիչխա, Մուքել բիճային տուն տար :

— Չե խալիա Նիկոլ, ուզիլ չի :

— Վոնց թե ուզիլ չի :

— Ենորհակալ եմ խալիա :

Նիկոլը հասկացնում և, վոր պատիվ տալն իր  
պարտքն և և համոզելով տուն և ուղարկում, նախապես  
փիչխայի ականջին ինչ վոր բան փսփսայով :




Մուքելը խուրճինն ունի և պարտք ու դնում յեբեխա-  
յի հետեից :

Յերբ տուն եմ մտնում , Փիշխան իր խանութի աղան-  
ջին ինչ վոր բան և փախում :

— Բարե յեկաք , Մուքել բիճա , համեցեք նստեք ,  
Մուքել բիճա :

Մուքելը խուրճինը ցած և դնում ու նստում :

Տանտիկինը նրա առաջ մի բաժակ հովացած թեյ և  
դնում ու սիրալիր հարց ու փորձ անում գյուղից , տա-  
նըցոնցից . . .




Նիկոլի վորդին , Գ տարեկան չարածին , սկզբում  
քաշքշում և Մուքելի փեշերից , հետո խաղում և խուր-  
ջինի հետ ու աշխտեղ նկատում և պանիր :

— Մամա պանիր :

— Սուս :

— Մամա դեղի պանիրը :

— Լավ ձեռք մի տալ , Մուքել բիճան ինքը կտա :



16033  
A I 4055



— Մենակ բաղադ Նիկոլի խաթրին, մենակ բաղադ Նիկոլի խաթրին, — մտածում եր Մուքելը ու ձեռքով դանդաղությամբ հանում թուշի մի գլուխ պանիր և դնում սեղանի վրա:

— Սա յերեխուդ:

— Շատ շնորհակալ ենք, Մուքել բիճա, վոր դու մեզ շես մոռացել: Գյուղի պանիր, գյուղի պանիր. դիտես ինչ թանգ բան ե մեզ համար, մինչև իսկ փողից թանգ:

Յերեխան շարունակում ե քչփորել խուրճինը:

— Մամա կարագ ել կա. կարագ եմ ուզում, կիտալացով բացականչեց յերեխան:

Մուքել բիճան անգիտակցաբար ձեռքը տանում ե խուրճինը ու հանում այնտեղից շորի մեջ փաթաթած մի մեծ կտոր թարմ կարագ:

— Ախ, ես ինչ հրաշալի կարագ ե, բացականչում ե տանտիկինը:

— Սա ել քեզ:

— Գյուղի կարագ, գյուղի կարագ, գիտեք ինչպես ենք կարոտել գյուղի կարագին:

— Կարծես քաղաքի կարագն ել գեղից չի գալիս, սրտնեղությամբ մտածեց Մուքելը:

Յերեխան կշտանալուց հետո, նկատեց Մուքելի սրածայր մեծ փափախը, վերցրեց ու սկսեց հետը խաղալ:

Մուքելին այդ բանը զայրացնում ե, բայց ձայն չի հանում բազադ Նիկոլի խաթրին:

— Մայրիկ տե՛ս, մայրիկ տե՛ս, — այս խոսքերի հետ յերեխան ամենայն ուժով սկսեց փափախը գետնին խփել ու բարձրացնել:



Դրա թմփոցը նրան դյուր եր գալիս :

— Դե՛հ Մուքեւ, թե տղամարդ ես արի սրան դիմացիր, զայրացած մտածում եր քեթխուղաների հետ նստող-վեր կենող Մուքեւը :

— Համա ելի բազազ Նիկոլի խաթրը, ելի բազազ Նիկոլի խաթրը, — կրկնում եր նա իր մտքում :

Մուքեւը յերեսանց չարտահայտելով և վոչ մի դժկամակություն, դատարկ խուրջինը թևը քցեց ու դուրս յեկավ :

Նրան հետևեց բազազի Փիչխան :

Մտան խանութը :

— Լավ թեյ խմեցի՞ր :

— Խմեցի :

— Լավ հանգստացա՞ր :

— Արի գործերս վերջացնենք, արի, — դժկամակությամբ սլատասխանեց Մուքեւը :

— Դե՛հ, Մուքեւ ջան, հմի տաս, տեսնեմ ի՞նչ ես ուզում :

— Ուզում եմ, խալիա ջան, յորդան դոչակի յերեսաստառ, երեխու համար փոխնորդ, շալ ու շալովնի, մինթանա . . . համա դու գիտես . . . սևերես ջանես . . .

— Արխեյին կաց, իմն ուրիշ ապրանք ա, կոուլերատիլի նոր գործած Ֆալչիլի ապրանքներից չե :

Բազազ Նիկոլը ցած է բերում թարեքներում յեղած մի քանի թոփ կտորները և յուրաքանչյուրի հատկությունը գովելով բացում է խնամքով ու դնում Մուքեւի առաջ :

Մուքեւը հիասթափությամբ նայում է բազազ Նի-



կողի դատարկ թարեքներին, նայում ե իր առաջ դրած մի քանի սոսընձած կտորներին, լսում ե նրա դուվքը, լսում, ու զարմանում . . .

Ուզում ե տեղից վեր կենալ ու դուրս դալ խանութից, բայց ինչ վոր մի դադտնի ույժ նրա թեից բռնած պահում ե :

Դա բազազ Նիկոլի խաթրն ե :

Իսկ բազազ Նիկոլը կյանքի հոգեբան ե, հաշվի յե առնում այդ հանգամանքը ե ուղտագործում ե վարկյանը :

— Սա Մարագովի քաթան ե, իսկականն ե, սրա նմանը քիչ կճարվի ու սկսում ե չափել իր հնադարյան արշինով :

Չափում ե սասաիկ արագուլթյամբ—նա վարպետն ե իր գործի :

Արշինը կարծես հոսում ե բազազի ձեռքերում ու կորչում ե խշխշան, սոսընձած քաթանի ալիքներում :

Մուքելը նայում ե արագուլթյամբ շարժվող արշինին ե նրան թվում ե կարծես, վոր արշինը չափի ժամանակ հետ ե մնում . . . կաղում ե . . .

Քաթանը փոքր քուլաներով թափում ե վերեւից :

Բազազ Նիկոլը հրճվում ե :

Ցած ե բերում պասաից կախված՝ գլխի կարմիր թաշկինակներից մեկը :

— Ես ել իմ կողմից նվեր աղջկանդ, —ասաց նա ու արագուլթյամբ սկսեց գցել շոտկը, աջ ձեռի միջամատով :

Մուքելից առնում ե գրամբ, կտորները կապում ե թաշկինակի մեջ ու սալիս իրեն :





— Եսա՞, — հարցնում է Մուքելը զարմացած, փոքրիկ կապույտ ձեռքի վրա ծանր ու թեթև անելով :

— Եգա, բա ել ի՞նչ ես ուզում :

— Խալիա, ախր դու մենակ յարդան գոշակի յերես աստառ կտրեցիր :

— Բա ուրիշ ել ի՞նչ ես ուզում :

— Ուրիշ ջանիդ սաղություն, համա ասըմի երեսու համար մինթանա, փոխնորդ, կուրտիկացու . . .



— Դե՛ Մուքել ջան, փողդե եղքան եր, փողդե դյո-  
րա ել ասլրանք եմ տվել: Գնի մասին ել արխեյին կաց.  
Յ արասի քաթան եմ հաշիվ արել. կոոպերատիվի գինա,  
ել ի՞նչ ես ուզում:

— Կոոպերատիվի գինա, — հեզնորեն կրկնեց Մու-  
քելը: — Բա ել ինչի՞ յեմ կուշտդ յեկել, վոր դու ինձ կոո-  
պերատիվի գնով պիտի տաս: Ասաց Մուքելն ու դուրս  
յեկավ խանութից:

Հիասթափությամբ աջ ձեռքով ծոծրանքի կողմից  
փափախն առաջ բորթելով աչքերը գցեց ու քայլերն  
ուղղեց դեպի յերկաթուղու կայարան:

---

Մուքելի ամբողջ ընտանիքը սրտատրոփ սպասում  
եր նրան:

Ամենից շատ հուզվում եր Նազլուն: Նա սպասում  
եր, վոր ապին քաղաքից իրեն համար բացի անհրաժեշտ  
ճոթից՝ կրերե և գարդեր:

Չե վոր ապին նրան տաշտաքերանք եր ասում և  
հատկապես նրա համար ել Նարգիզը ծախել և քաղաք է  
դնացել:

Յերբ Մուքելը տուն մտավ մի փոքրիկ կապոց ձեռ-  
քին, բոլորը նկատեցին, վոր նա ծայր աստիճան հուզ-  
ված է և նրա ձեռքերը դողում են գայրույթից:

— Յերեխաս բախտ չունի, — ասաց Մուքելն ու փա-  
փախովը սրբեց յերեսի քրտինքը:

Բոլորը սպասում եյին, վոր Նարգիզ կովի ծախված  
փողով Նազլուի բաժինքը կարելի յե պատրաստել, բայց  
դուրս յեկավ հակառակը:

Բոլորի սիրտը կոտրվել եր:

Դանակ տաս վոչ մեկի սրտից արյուն չի կաթիլ:



Վարդանը մինչև այժմ ապնի խոսքով եր նստում  
վեր կենում, չեր ուզում քեֆին դիպչել:

— Մեծ մարդ ե, թող անի ինչպես ինքն ե ուզում,  
— այսպես եր միշտ մտածում: Սակայն այժմ նա համբե-  
րել այլևս չեր կարող: Առանց յերկար մտածելու ապնի  
բերած ճոթը վերցրեց, տարավ կոոպերատիվ, վորտեղ  
չափեցին, զննեցին ու տեսան, վոր բազազ Նիկոլը սաս-  
տիկ խաբել ե Մուքելին, վոր նախ մետրի փոխարեն  
արշինով ե չափել և ապա արշինն ել ձեռքին խաղացնելու  
հետևանքով արշինի վրա ել ճոթը շատ պակասում ե:  
Քները հաշված են ավելի թանգ և վերջապես կտորները  
բոլորը համարյա բռակ են:

Կոոպերատիվի ծառայողը հայտնեց, վոր այդքան  
ճոթը կոոպերատիվում կարող են ձեռք բերել ընդամենը  
24 ուլբլով, այնինչ դրան վճարված ե 40 ուլբլի, չհաշ-  
ված սլանիրը և յուղը:

Հիասթափուլթյունը մեծ եր:

Ի՞նչ եր մնում անելու:

— Այտա, ախր սենց բան չի լինիլ, մի ասեք տես-  
նեմ, ի՞նչ անեմ, — դիմում եր Վարդանը կոոպերատիվի  
մոտ հավաքված գյուղացիներին:

— Տո, ըտենց ա ելի, հենց վոր ուզում ես վաճա-  
ռականներին խեր տաս, նրանք ջիլիղ դիխիդ են ուզում  
նստել, կաշիդ են ուզում պլոկել, ասում եր մեկը:

— Են որն ել մեր Աթին եր գնացել մնիցը շաքար  
առել, բերինք քաշեցինք, 3 գլովանքի տեղ 2 ու կես գուրս  
յեկավ. բա կոոպերատիվը սենց բան կանի՛:

— Դու շաքարն ես ասում. հերու Բեդնանք են վո՛ր  
դուքանչուցն եյին սերմացու առել, միտս չի, բերին ցա-  
նեցին, բեջարեցին, բան չդուրս եկավ, ամակները դուր



սեղը կտրավ . ըստ կոտակերատիւնն հարան սերմացու ա  
ծախում , թող մինը դա տախ , լավը չի դուրս եկավ .  
եղպես ա , մտքից քոս մարդն իրա խելքից պնում խա-  
թի մեջ ա ընկնում :

— Տո , մեկն ասող ըլի . լավ մա՛րդ , քթիդ տակին  
կոտակերատիվը թողած՝ պնում—քեզ պելերի ուխն ես  
պցո՞ւմ . դե վոր ըտենց ա , գլուխը քոնը քարը : Այսպէս  
եյին զրուցում բոլորը զայրացած :

Վարդանն ընկերների խորհուրդով պանգատ ներ-  
կայացրեց դատարան , վորը հանեց հետեյալ վճիռը .

«Բազազ Նիկոլից պնած ճոթը հանձնել տերտերին և  
Նարգիզ կովը վերադարձնել Մուքելին» :



Բոլորի համար անսպասելի յեր այս վճիռը . բայց  
միևնույն ժամանակ և ցանկալի , վորովհետև մասնավոր  
խանութպանները համարյա բոլորին դադել եյին :



— Այ թե վճիռ ա հա՛, —ասում էյին միմիանց  
դյուղացիք:

Նարդիզ կովը բերին Մուքելի տուն:

— Ապի, հմի վո՞նց ա, —մտենալով Մուքելին  
հարցրեց Վարդանը:

— Բալա ջան, դովրանը ձերն ա, հմի մենք ձեր  
վտարովը պիտի դնանք, —ասում էր Մուքելը տմբացնե-  
լով իր գլուխը:

Որը կիրակի յէ:

Կոռպերատիվի մոտ հավաքված դյուղացիները մեծ  
հետաքրքրությամբ խոսում էյին նոր կառուցվելիք  
էլեքտրական կայանի մասին:

Մուքելն անհաստատ քայլերով մտենում էր կոռ-  
պերատիվին իր մեծ փափախն աչքերը դցած:

— Մուքել բիճա, ի՞նչ կա, հարց էյին տալիս դյու-  
ղացիք:

— Վորտեզ ա վարիչը:

— Վո՞ր վարիչը:

— Կոռպերատիվի:

— Ըտի յա, ցույց էյին տալիս դյուղացիք, մեկնե-  
լով մասը դեպի կոռպերատիվի հետևի սենյակը: Մու-  
քելն ուղիղ գնում է մտնում է սենյակը, վորտեզ վարիչի  
նախադասությամբ ինչ վոր խորհրդակցություն է կա-  
տարվում:

— Ի՞նչ կա, Մուքել բիճա, դիմում է նրան վարիչը:

— Հնգեր վարիչ, խնդիրք ունեմ, համա...

— Ասա Մուքել բիճա, ասա.

— Ինձ ել կոռպերատիվի անդամ դրի, —ասում է  
Մուքելը փափախն աչքերից հետ քաշելով:



— Աչքիս վրա, Մուքել բիճա :

— Յես սխալված եմ յեղել, յես հմի տենում եմ, վոր կոոպերատիվը մեր ցավի դարմանիչն ա, կոոպերատիվը մեր փրկիչն ա :

— Շատ ուրախ ենք, վոր վերջապես հասկացար, — ասում ե վարիչը և անդամագրում Մուքելին :

— Դե՛հ, վարիչ ջան, մի խնդիրք ել ունեմ :

— Ի՞նչ կա, ասա :

— Նարգիզ կովը Ձեզ եմ տալիս, տեղը յերեխուրածիներէ համար ճոթ տվեք :

Վարիչը բացատրում ե Մուքելին, վոր իրենց նպատակը չե գյուղացուն քայքայել, այլ նրան ոգնել և հետևապես կոոպերատիվը նրան կովից չի զրկել :

— Կովը թող քեզ մոտ մնա, ինչ ասլրանք ուզում ես վերցրու, կտանք. յեկող տարի բերքով դու կվճարես :

Մուքելի ծերացած աչքերին արցունք ե յերևում և նա չի իմանում, թե ինչպես հայտնի իր շնորհակալությունը :

— Պետք չե, պետք չե մեզ շնորհակալություն հայտնել, վորովհետև այս կոոպերատիվը ձերն ե. միայն թե դուք պիտի այդ բանը հասկանաք : Այս ասելով, վարիչը Մուքելի թևից բռնած տանում ե կոոպերատիվն ու կարգադրում նրան ասլրանք բաց թողնել :

— Դե՛հ, Մուքել բիճա, հմի դնա տուն, Նանին ու Նազլուին ուղարկիր, թող դան ճոթեղենն իրենց սրտովը ջոկեն :

— Հա, բալա ջան, եղ ել ես դուզ ասում, թող իրան սրտովը լինի :

Նազլուն նանի հետ դնաց կոոպերատիվ ու իր բա-



ժինքն իր սրտովը ջսկեց : Դրանից հետո նա իրեն ուրախ  
և յերջանիկ եր զգում :

— Հիմա տեսա՞ր , ապի , տեսա՞ր , շարունակ կըրկ-  
նում եր Վարդանը :

— Դու մի ասիլ կոոպերատիվը մեծ հունար ա ունե-  
ցել , յես բանից բեխարար , — միշտ կրկնում եր Մուքելը  
խոսակցության ժամանակ :

---

Այդ բոլորից հետո Մուքելի հոգեկան աշխարհում  
մեծ հեղաշրջում առաջ յեկավ : Նա այնուհետև փոխեց  
իր վերաբերմունքը դեպի իր համագյուղացիները . նա  
այլևս քեթխուղաների տուն չեր գնում գալիս և նրանց  
դատարկարան խոսակցությունն արդեն անհաճո յեր  
դարձել . իսկ տերտերի հետ այլևս աչքով աչք չուներ :

Մուքելը վոչ միայն ինքը դարձավ կոոպերատիվի  
անդամ , այլ և նրա ջերմ պաշտպանն ու բարի որինակը  
չատ շատերի համար :

— Եդ տեսակ ժեռ մարդը , վոր գնաց կոոպերատիվ  
մտավ , ինչո՞ւ մենք ել չմտնենք , — ասում էյին շատերը  
ու հետևում Մուքելի որինակին :

Ամեն անգամ ժողովներին Մուքելը վոչ միայն ինքն  
եր գալիս առաջինը , այլ և շատ շատերին ել քաշում՝ իր  
հետն եր բերում :

— Մղդսի , մղդսի , արի կոոպերատիվ , արի , —  
դուում եր Մուքելը կտերը կանգնածին :


Գյուղացիք հավաքվում էյին , զրուցում ու կոոպե-  
րատիվի հրատապ խնդիրները մշակում :

Հենց առաջին տարին՝ Մուքելը կոոպերատիվից  
խոտի սերմացու վերցրեց ու ցանեց և այդ խոտասակավ  
յերկրում նա այնքան խոտ վերցրեց , վոր նրա կեսը



կոոպերատիվին տալով, փոխարենը 2 լավ կով առավ : Այնուհետև անդամագրվեց վարկային ընկերութեան, վորի միջոցով ձեռք բերեց շատ կարևոր յերկրագործական մեքենաներ :

Մուքելի տնտեսութեանն այնքան բարձրացավ, վորի նմանը նա յերբեք չէր տեսել իր կյանքում :



Մտտենում էր կոոպերատիվի տունը, և բոլորն անհամբեր սպասում էին դրան :



— Այստա , ուխտը մեր դռանը , մենք սարեւրն ենք ընկնում , ուխտատեղ ման գալիս , — ասում էյին գյուղացիք միմիանց :

— Վաղը բոլորդ հավաքվեցեք , կոոպերատիվի տոնն է , — հայտարարեց վարիչը գյուղացիներին :

Ծեղը նոր ծագած , ժողովուրդը հավաքվեց իր կոոպերատիվի շուրջը :

Կոոպերատիվի գլխին ծածանվում էր մի կարմիր դրոշակ : Ո՞վ էր գրել այդ , վոչ վոք չգիտեր — չգիտեր և ինքը վարիչը : Իսկ յերբ փչեց հյուսիսային քամին , թեթևակի ծածանեց դրոշակի դումաչն ու բոլորը պարզ կերպով վորոշեցին նրա վրա ծուռ ու մուռ տառերով գրած՝ հետևյալը .

«Փրկիչ կոոպերատիվ» :

Բոլորը միմիանց յերես էյին նայում զարմացած , վորովհետև վոչ վոք չգիտեր , թե ով էր գրա հեղինակը :

«Զիփլախ» Սաքոն բարձրացավ մի կոճի վրա և սկսեց խոսել այդ որվա մեծ տոնի մասին .

— Մենք կոոպերատիվի թիկունքում ենք կանգնած . իսկ կոոպերատիվն էլ մեր թիկունքում է կանգնած , — խոսում էր նա :

— Շուտով թթե՛նի յենք գցելու , թթենի՛ , հիմա էլ շիրամ տի պահենք , գիտե՛ք , բոլորս լավ կլնենք :

Ժողովուրդը լսում էր «Զիփլախ» Սաքոյին ուրախությամբ , լսում ու հուզվելով որորվում էր , վորպես զաչտի հասած արտը թեթև քամու տակ :

— Դուք հո բոլորդ լավ ճանաչում եք Մուքելին նա իր նստած եջից վեր չեր ուզում գալ , կոոպերատիվին



ամեն որ հայհոյում եր. համա տեսեք, թե բոլորիցս թա-  
քուն նա ինչ ե արել: Այս խոսքերի հետ նա ձեռքը մեկ-  
նեց դեպի կարմիր դրոշակը և բոլոր գյուղացիները մե-  
քենայորեն հայացքներն այն կողմն ուղղեցին, վորի վրա  
բոլորը միաբերան ու լսելի կերպով կարդացին՝

«Փրկիչ կոոպերատիվ»:


Ժողովուրդը ցնծում եր ուրախությունից:

Այդ բոպեյին փողոցի մյուս կողմում գտնվող գյու-  
ղական քարաշեն յեկեղեցու պատի տակ՝ մարաղ մտած  
տերտերը, բոլորից մոռացված, թաքուն կերպով դի-  
տում եր այդ բոլորը, դիտում ու զայրանում, վոր ժո-  
ղովուրդը պատարագը թողած, ընկել ե կոոպերատիվի  
հետևից:

Այնուհետև խեղճացած տերտերը զլուխը դնում ե  
յեկեղեցու արդեն մամռոտած պատին ու մտածում  
սրտնեղությամբ.

— Մինչև այժմ ժողովրդի փրկիչը փողոցի այս  
կողմն եր, իսկ հիմա նա փոխվեց փողոցի այն կողմը,  
ու աչքերին զոռ տալով նա կարմիր դրոշակի վրա նշմա-  
րեց.

«Փրկիչ կոոպերատիվ»:













ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0038300



[064]

A  $\frac{I}{4055}$

ԳԻՆՆ Ե 30 ԿՈՊԵԿ